



## ԲԱԶՄԱՎԵԶՈՒ ՄԻ ԳՐքԻ ՀՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Վենետիկի Մխիթարյան միաբանության մի հատվածը 1776-ին տեղափոխվելով Տրիեստ (Իտալիա) և այնտեղ շուրջ 35 տարի ծավալելով գրական գործունեություն, ունեցավ նաև իր սեփական տպարանը, որտեղից մինչև 1811-ը լույս տեսավ ավելի քան 70 անուն գիրը:

Տրիեստից 1811-ին Վիեննա տեղափոխված և տեսեսապես քայլաված Մխիթարյանները երկու փայտա մամոլով և Տրիեստից մի կերպ թերված տառերով այնտեղ ևս հիմնեցին տպարան, որի տպագրական երախայրիքը՝ «Վարք Մարեմայ»-ն, լույս տեսավ 1812-ին:

Սակայն տպարանի բարգավաճման ստույգ տարեթիվը կարելի է համարել 1837-ը, երբ բացվեց տառաձուլարանը և հիմք ստեղծվեց տպագրելու բազմալեզու գրքեր, որոնց առաջները հանդիսացավ «Որ օրինես զայնոսիկ» վերնագրյապ գիրը<sup>1</sup>:

Սույն հազվագյուտ տպագիրը թվում էր, թե մեզ մոտ (Հայաստանուն) գոյություն չուներ, այդ պատճառով էլ մեր մատենագիտության երախտալիրներն իրենց աշխատություններում հղել են Գ. Զարրիմանյանի «Հայկական մատենագիտություն» աշխատությանը<sup>2</sup>:

<sup>1</sup> Գրքի լինվ վերնագիրն է՝ «Որ օրինես զայնոսիկ (Աղօթք սրբոյ պատարագին)» թարգմանեալ ՚ի բան և մինչ լոգուս: Վիեննա, ՚ի վան Պաշտպան և Աստուածածնի, 1837:

<sup>2</sup> Հայկ Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Մատենագիտություն, Խմբ. Հ. Ս. Անասիսի, Երևան, 1987, էջ 221:

Սակայն կատարված փնտրությը պատկեց հաջողությամբ: Հայկական (ինչպես նաև օտար) ձեռագրերի և տպագիր գրքերի գանձարան Մատենադարանում, մեզ հաջողվեց գտնել այն, որտի ավելորդ չենք համարում տալ այդ մատենադարանյան օրինակի Ակադեմիական գրքությունը:

Գիրքը ունի Մատենադարանի 1579 հայությանը համապատասխան վրա կան կնիքներ: Առաջինը մի քառակուսի կողշոր կնիքն է, որտեղ պարզ կարդացվում է՝ «Նույր Ս. Էջմիածնի Գերգեան ժառանգաւորաց մեմարանին. Մուրացանից 25 տեպտ. 1899 ամի»: Երկրորդը Էջմիածնի մեմարանի Մատենադարանի կնիքն է, որին հաջորդում է Երևանի Մատենադարանի հին կնիքը: Վերջին էջերից մեկում կա նաև «ՀՄՆՀ Լուսողուկում Էջմ. պետ. Մատենադարան» կնիքը:

Տիտղոսաթերթում կա գրքի տպագրության տարեթիվը.

### Viennae

Dic 18, Mensis Octobris 1837

Վերջում, կազմի վրա տպագրված են հետևյալ տողերը.

### Viennae

Typis Congr. Mechitaristicae

1838

Սույն տողերը հուշում են, որ եթե գրքի տպագրության ակզենտուրումը եղել է 1837-ի Բուկունիքերի 18-ին, ապա տպագրությունն ավարտվել և գիրքը լույս է տեսել 1838-ին:

Սովոր կմիջների հաջորդականությունը տպին է նաև գրքի ողիսականը. նայ մեծանուն արձակագիր Մուրացանը այն նվիրել է Էջմիածնի ճեմարանին, որից փոխանցվել է Հայկ. ՍՍՀ Հուստղկումին, ապա տեղափոխվելով Երևան՝ հանգրվանել է Մատենադարանուն:

Հորեւար գրքով կայրծում ենք, որ հայկական տպագրության պատմության անդաստանում իր մեջ պարունակող բազմաթիվ լեզուների առկայության տեսակենուից անդրանիկն է, քանի որ ավելի վաղ Վեճետիկի Միհիթարյանների կողմից 1828-ին հրատարակված «Հայտով խոստովանիմ» աղօթքը 24 լեզվով է լույս ընծայված<sup>5</sup>:

Տպագիր գրքի լեզուներն են՝ գրաքար, աշխարհաքար, մին հունարեն, ոյր հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, հոլանդերեն, անգլերեն, հինգերեն (հոլանդերեն), ուստերեն, լիներեն, իլուրերեն, սերբերեն, հունգարերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, երրայնցերեն, քաղդերեն, ասորերեն, վրացերեն»:

Արդ, տեսնեք, թե ինչպիսի պայմաններում է լույս տեսել և ի՞նչ բովանդակություն ունի 25 լեզվով հրատարակված «Որ օրինես»-ը:

«Համերև ամսօրյա»-յում տպված հոդվածները միաբերան հետևյալն են աստմայի: 1837-ի հոկտեմբերի 18-ին, երբ մայր վանքի շինությունը հիմնականում ավարտված էր, վանքի ընդհանուր արքանայր գեր. Սրբատակես Սպարյանի (Լուս ԺԲ պապի կողմից անվանված արքեպիսկոպոս Կեսարիայի) հրավերով Փերդինանդոս կայսրը, Մարիաննա կալվարուին իրենց շքախմբով գալիս են Առաջնա վանքը՝ հիմնաբարը դնելու: Համերևություններից հետո հյուրերն ակտում են շինությունները «պարտիլ», և երբ տպարանի սրահներն են մտնում, 26 տպագրական մեքենաներ ակր-

<sup>3</sup> Գ. Լուսյան, Հայ գիրք և տպագրության արվածը, Երևան, 1958, էջ 195–196. Թեղիկ, Տիառ և տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 47: Սոյն 24-լեզվան հրատարակությունը այս նեղանակների մոտ ունի 1888 տարեթիվը, որը վսաբունք է:

<sup>4</sup> Գ. Զարյանական, Մատենադարան՝ հայկական թարգմանութեանց նախնաց (Դար Դ–ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 348: Հովհ. Պետրոսյան, Հայ միա և միջնադարյան գրականության համառու թիրիոգրաֆիա, Երևան, 1941, էջ 116: Դ դեպ, դուռը 1810-ական թվականներից ակած, Վենետիկի Միհիթարյանները հրատարակել են բազմաթիվ վայրեական «Հայատով խոստովանիմ»-ներ, որտեղ, սակայն, օգտագործված թարգմանական և գործնական է վերոհիշացին:

սում են «բանի», «որոնցմէ առաջին» այս չընալ հանդիսան պատկանող գերմաներէն ուղերձ մը, երկրորդը լատիներէն, իսկ 24 մեքենաներն «Որ օրինես զայնոսիկ» աղօթքը 24 լեզուա վեհայան հիրոց աշքին առջև տպեցին»<sup>6</sup>:

Պատմական սում հանդիսությունները կարագրելուց հետո նոյն նոյն հանդեպ մի այլ հոդվածում ներպահակում է. «Նախ տպարան գացին, որ նոյն պահուն տպանակ գերմաներէն ուստանար մը և «Որ օրինես զայնոսիկ» աղօթքը 25 լեզուա իրենց վեհափոռութան նուիրեց գեր. Արքահայրը»<sup>7</sup>:

Հայագիտության մեծ երախտավոր հայր Ներսես Ակինյանը Վիեննայի Միհիթարյան միաբանության գրական գործունեությունը արտացոլող մի աշխատությունում սոյն գրքի տպագրության սկզբանվորումը հետևայ կերպ է կարագրում. «Հիմնաքարի դրութեան համար կը հրահրուի կայսրը Փերդինանդը: Նորին վեհափառութինը սիրով կը բարեհամի, և 1838 հոկտ. 18-ին ընկերակցութեամբ Մարիա Աննա կայսրության կուգայ վանքը»: Բարձրապատիկ հյուրերին մեկ առ մեկ հիշելուց և հանդիսությունները կարագրելուց հետո հայր Ակինյանը շարունակում է. «Հիրերը կ'առաջնորդուին Տպարան, որ առաջին մատուր կ'ընծայէ Կայսեր հանդիսութեանց յարմարանաստեղծութին մը: Երկրորդը լատիներէն ուղերձ մը. մնացած 25 մամուլներն ի կարգին՝ երբ հիրերը կը մօտենան, կը տպեն «Որ օրինես զայնոսիկ» աղօթքը 25 լեզուա»<sup>8</sup>:

Հիշված աշխատությունում նեղինակը, շարադրելով Վիեննայի Միհիթարյանների գործունեության պատմությունը, սոյն արժանահիշատակ դեպքին անդրադառնում է ևս երկու անգամ.

«1837-ին նորակառոյց Տան մէջ շինուեցաւ նաև նոր տպարան, երբ 26 մամու ի շարժման գոտի նորին վեհափառութիւն Փրանկիկ Ա կայսրը»<sup>9</sup>: «1818-էն ի վեր կամաց կամաց բազմացան արևելեան լեզուներու գորերը: Ինքն բազմաթիվունա տպարան 1837-ին լոյս հանեց «Որ օրինես զայնոսիկ» աղօթքը 25 լեզուա. որ 1893-ին երկրորդ անգամ լոյս տեսաւ 50 լեզուա»<sup>10</sup>:

Գ. Լուսյանը իր աշխատությունում, նվիրված առհասարակ հայ գրքի և տպագրու-

<sup>5</sup> «Համերև ամսօրյա», 1889, էջ 168:

<sup>6</sup> «Համերև ամսօրյա», 1888, էջ 203:

<sup>7</sup> Ն. Ակինյան, Ակնարկ մը Վիեննական Միհիթարյան միաբանութեան գրական գործունեութեան վրայ, Վիեննա, 1912, էջ 10–11:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 62:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 67:

թշան արվեստին, մեծ գովեստով խոսելով Վիեննայի Մյուհարյանների տպագրական գործունեության մասին՝ հետևյալն է ասում մեզ հետաքրքրող դեպքերի վերաբերյալ. «Սպարան արքանոր շանքերով 1835—37 թվականներին հիմնովին նորոգվում են վաճառքի շինությունները և հաջորդ տարվանից (ընդգծումը մերն է—Ս. Կ.) միաբանությունը փոխադրվում է նորակառուց շենքը, որը տեղափորվում է և տպարանը հարուստ տարավորումներով»: «Դեռ 1837 թվին այդ տպարանում շարվում և տպագրվում է «Որ օրինեւ զայնոսիկ» աղոթքը 25 լեզվով, իսկ 1893 թվին՝ 50 լեզվով»<sup>10</sup>:

Ինչպես նկատվում է, նկարագրություններում կան ընդհանություններ, և տարբերաբար նաև բարեկարգություններ: Փորձենք բացանորել հյութի մատուցման մեջ եղած այդ տարբերությունները և փետրենք դեպքերի ճշտագույնը:

Ինչպես տեսնում ենք, տպված լեզվուների քանակը մեկ թիվ ունի, այն է՝ 25-ը, որը կաշխատենք մանրամասնել տերսուից քըննարկման և բարգմանական լեզուների հարցը պարզելու ժամանակը: Իսկ մեկ անգամ հիշված 24 մեքենաներն ու 24 լեզուն<sup>11</sup> գուցե առաջ է ենել թվերի հարթեցման ձգտումից, որովհետև այնունշան հիշվում է նաև կայսեր Ամիրիկա մի բանատեղծություն և մի լատիներեն ուղերձ: Մեքենաների և լեզուների քանակի տարբերության համահարթեցման մի այլ օրինակ է նաև հայր Ն. Ակինյանի մոտ հիշվածը, երբ ասվում է. «...առաջին մասում կ'ընծայէ կայսեր նանդիստեանց յարմար բանատեղծութիւն մի: Երկրորդը լատիներէն ուղերձ մը...»: Եթե սրանց գումարենք նաև իր իսկ կողմից հիշված «մնացած 25 մասնդներըն...», ապա ստացվում է 27 տպագրական մեքենա: Սակայն, քանի որ վերոբիշյալ լատիներէն ուղերձը բացակայում է տպագրված գրքում, ուստի գտնում ենք, որ մեքենաների քանակի ամենահավանական թիւը 26-ը է:

Ծփոթված է նաև առաջին հայացքից պարզ թվացող գրքի տպագրության սկզբանավորման տարեթվի հարցը:

Ինչպես տեսանք, հայր Ն. Ակինյանը իր հայտառությունում երեք անգամ է հիշում սույն իրադարձությունը. առաջինում ուղղակի գրված է 1838-ի հոկտ. 18-ը, որը պետք է վրիպակ համարել, քանի որ երրորդ հիշատակման մեջ, կարծես ուղղելով, գրում է նիշտ տարեթիվը:

Սակայն երկրորդ անգամ, երբ հցում է 1837-ին նոր տպարանի հիմնադրման և

կայսեր այցելության մասին, շարունակությունում նակասելով ինըն իրեն՝ գրում է. «Նոր տպարանի մէջ 1838-ին նաստատուեցաւ առանձին ձուլարան մ'ալ, որ հազարարություններով մայրեր պատրաստուեցան, և ձուլուցան լատիներէն, հայերէն, սերբերէն, կիրտելեան և այլ գրեր»<sup>12</sup>:

Հակառակությունը նրանում է, որ դեռ 1837-ին վերոբիշյալ բազմաթեզու գրքի լույս ընծայման համար արդեն կային բազմաթեզու մայրեր, ինչպիսիք էին «կիրեղեան»-ը (Կիրիլիցան) և այլ տասնյակ լեզուների, այլպես ինչպէս կարող էին հոկտեմբերի 18-ին երկուս ու կես տասնյակից ավելի տպագրական մեքենաներ, կայսեր և այլ հյուրերի աչքի առաջ, միանգամից աշխատել և տպել 25 լեզվի տառերից բաղկացած «Որ օրինեւ»-ը: Ուստի պետք է ընդունել, որ տառաձուլարանը բացվել է 1837-ին<sup>13</sup>:

Ծփութան կարիք ունի նաև Գ. Լենյանի մեջբերումը, որը ասվում է, որ հաչորդ տպարանից (1838-ից) տպարանը իր հարուստ անրքամիրումներով տեղափոխվում է նորակառուց շենքը, իսկ հետագա տողերում մեղինակը հակասելով պատմական այն փաստին, որ գիրքը տպվել է նորակառուց շինությունում, ընդունում է 1837 թվականը:

Գրքի լոյս ընծայման պայմանների և տարեավի քննարկման վերաբերյալ պարագան բավ համարելով, այժմ խոսնք նրա բովանդակության և բարգմանությունում օգտագործված լեզուների մասին:

Բովանդակությունը շատ մեծ չէ, այն մի աղոթք է, մի հատված պատարագից, որ կատարում է պատարագիչը «աղաթք ի մէջ եկեղեցւոյ» կոչված վերջնահատվածում, և ունի հետևյալ բովանդակությունը.

Որ օրինեւ զայնոսիկ, որք օրինեն զքեզ Տէր. և սուրբ առեն զյուացեալու 'ի քեզ: Կեցո՞ զժողովուրդս քո, և օրինեա զժառանգութիւնս քո: Զյումն, եկեղեցւոյ քո պահեա: Սրբեա' զոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառատրեա' աստուածային զօրութեամբ քով: Եւ մի' թողուր զյուացեալու 'ի քեզ: Զիաղաղութիւն քո պարգևեա' ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քիսատոնից, և զիմուրեալ մանկանց նոցան, և ամենայն ժողովրեանս: Զի ամենայն սուրբ բարիք, և ամենայն

<sup>10</sup> Գ. Լենյան, Աշվ. աշխ., էջ 198, 199:

<sup>11</sup> «Հանդիս ամսորդա», 1889, էջ 168:

<sup>12</sup> Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 82:

<sup>13</sup> ՀԱՀ, հ. 11, Երևան, 1985, «Վիեննայի հայկական տպարան» բովածը, էջ 428:

պարգևք կատարեալք ՚ի վերուստ եմ ի-  
շեալ առ ՚ի քեն, որ ես հայր լուսոյ; Եւ  
քեզ վայել է փառք, իշխանութիւն և պատի,  
այժմ և միշտ և յահիտեան յահիտեանից.  
ամէն:

Այս թարգմանության արգասիք է հետև-  
յալ հունական բնօրինակից.

‘Օ սննօց տու սննօցնեած ս Կորիε,  
[օ Թեօս ՚իման]

καὶ ἀγίαν τοὺς ἐπὶ σὺ πεποιθότας, σώ-  
σον τὸν λάόν σου· καὶ εὐλόγησον τὴν αἰτη-  
ρονομίαν σου. το πλέρωμα τῆς ἑκκλη-  
σίας σου φύλαξον, ἀγίασον τοὺς ἀγαπῶν-  
τας τὴν εὐπρόσπειαν τοῦ οἴκου σου. Σὺ  
αὐτοὺς ἀντιδόξασον τῇ Θεῖκῃ σου δυνά-  
μει, καὶ μὴ ἔχαται λίπης ἡμᾶς τοὺς ἐλπίζον-  
τας ἐπὶ σέ. Εἰρήνην τῷ κόσμῳ σου δώρη-  
σαι, ταῖς Ἐκκλησίαις σου, τοῖς Ἱερεῦσι,  
τοῖς Βασιλεῖσιν ՚իման, τῷ οτράτῳ καὶ παν-  
τὶ τῷ λαῷ σου. “Οτι πᾶσα δόσις ἀγαθή, καὶ  
πᾶν δώρημα τέλειον, ἄνωθέν ἔστ: κατα-  
βαῖνον ἐκ σοῦ τοῦ Πατρὸς τῶν φύτων” καὶ  
σὺ τὴν δόξαν, καὶ εὐχαριστίαν, καὶ προσ-  
κύνησιν ἀναπέμπομεν, τῷ Πατρὶ, καὶ  
τῷ ‘Ὑψ, καὶ τῷ ἀγίῳ Πνεύματι, νῦν, καὶ  
հետո, καὶ εἰς τοὺς αἰῶνας τῶν αἰώνων. ’Αμήν.

Սույն հունարեն բնագիրը հայերեն է թարգմանվել Եղիշերին, որով լի-  
նելով հայկական վաղ՝ ուսկեղնամիկ թարգմա-  
նություններից, փայլում է իր գեղեցկու-  
թյամբ, ինչպես նաև բնագրի նկատմամբ  
ունեցած հարազատությամբ:

Սակայն մեր կողմից կատարված համե-  
մատությունից պարզէց, որ հայերեն թարգ-  
մանությունը ունի նաև որոշ տարբերու-  
թյուններ, որոնք հետևյալներն են.

ա) Այլ բնագրերում, առաջին տողի վեր-  
ջում հունարենում կա օ ՚իման (Աստ-  
ուուան մեր), որը հայկականում բացակա-  
յում է:

բ) Տվյալ հունական բնագրում եղած  
Վասիլեսու ՚իման . (թագաւորաց Մերոց)  
հայերենում ստացել է «Թագաւորաց քրիս-  
տոնէից» համարժեքը: Սա հնատքրական է նրանով, որ կարծես հայ թարգմանիչների  
կողմից օգտագործված համարժեքը նպա-  
տակային է, որով և բացահայտում է նաև  
թարգմանության ժամանակը, եթե 428-ին  
վերացել էր Արշակունյաց հարստությունը,  
և հայկական թագավորություն այնպ չկար:

Ուստի հունական «թագաւորաց մերոց»-ը  
«մերը» չինելով, ստացել է «Թագաւորաց  
քրիստոնէից» համարժեքը, որը և հավեր-  
ժանալով այդպես էլ հասել է մինչև մեր օ-  
րերը: Այն չի փոխվել նաև Հայաստանում  
թագավորական մականի առկայության ժա-  
մանակ<sup>14</sup>:

գ) Հայերենի «իշխանութիւն և պատի»-ը  
հունարենում չկա:

դ) Հունարենի «եւ գոհութիւն և երկրպա-  
գութիւն մատուցեամբ նօր և որդոյ և սրբոյ  
հոգուն» հատվածը հայերենում բացակա-  
յում է, որից հետո տերատերը վերշամում  
են նոյն ձևով՝ «այժմ և միշտ և ...»:

Հայ հունագոտությունների, սոյն հատ-  
վածը Բարսեղ Կեսարացու պատարագա-  
մատուցից է<sup>15</sup> և առկա է նաև Ոսկերերան-  
յան օրինակում<sup>16</sup>: Այն բացակայում է Եղի-  
շակական «Խորհրդամատուց»-ում, ո-  
րով կարենի է եզրակացնել, որ Եղիշում  
այս հատվածը դեռ չէր կատարվում հայ-  
կական եկեղեցիներում: Միայն ԺԱ. դարից  
է, որ այն տեղ է գտել հայկական բոլոր  
«Պատարագամատուց»-ներում: Տարակուտ-  
իլի է նոյնին հունական պատարագի նախ-  
նական տարբերակում սոյն հատվածի ստ-  
կայությունը<sup>17</sup>:

Այսպիսով կարող ենք ասել, որ Միի-  
թարյանները պատարագի ամենագեղիցիկ  
հատվածներից մեկն են ընտրել և այն  
թարգմանել են երկու տասնյակից ավելի լե-  
զուններով: Գոյն դրանով ցանկացել են  
ետրակայացնել նաև իրենց ստեղծած տպագ-  
րական հզոր կարողությունը, որը միարա-  
նության գոյատևման համար նյութական  
ապահովման հիմնական գրավականն էր:

Այդպիսի հզոր կարողությամբ օժտված  
տպարանում տպագրված սոյն բազմակեզու  
գիրքը լեզուների հետևյալ հերթականու-  
թյամբ է լույս ընծայվել<sup>18</sup>:

<sup>14</sup> Գոյն երրուստ հիշվել է հայոց թագավորը,  
կամ թագավորությունը այնպէս, ինչպէս այժմ էլ  
ունեմք ավելացնեմ եմ «Եթ հանրապետութիւն Հա-  
յոց», առանց այն ներմուծելու իր հնությամբ սրբա-  
ցած բնագրի մեջ՝ գոյն չկամենալով խախտել աղ-  
սրբությունը:

<sup>15</sup> Հ. Գարբրիան, Սրբազն պատարագամատուց  
Հայոց, Վիեննա, 1897, էջ 157:

<sup>16</sup> Գ. Զարբանայան, Հայկական թարգմանու-  
թիւն Այսինեաց, Վենետիկ, 1889, էջ 254—256:

<sup>17</sup> Հ. Գարբրիան, Եշվ. աշխ., էջ 156—157-ի տո-  
ղատակը:

<sup>18</sup> Վերագրերում լեզուների ճշումը միայն լա-  
տիներեն է: Քանի որ նրանց մի մասը պարզաբ-  
նա կարիք ունի, ապա վերագրերին զուգահեռ ա-  
վեացրինք նաև հայերեն համարժեքները:

1. Graece — հունարեն (հին)
2. Armeniance — հայերեն (գրաբար)
3. Latine — լատիներեն
4. Germanice — գերմաներեն
5. Belgice — բելգիերեն (ֆլամանդերեն)
6. Anglice — անգլերեն
7. Gallice — ֆրանսերեն
8. Italice — իտալերեն
9. Hispanice — իսպաներեն
10. Lusitanice — պորտուգալերեն
11. Valachice — վալախերեն
12. Cyrillice — կիրիլիցա (սլավոներեն)
13. Serbice — սերբերեն
14. Russice — ռուսերեն
15. Bohemice — բոհեմերեն (չեխերեն)
16. Polonice — լեհերեն
17. Illyrice — իլլիրեն (ալբաներեն)
18. Carniolice — սլովակերեն
19. Hungarice — հունգարերեն
20. Armeniance — հայերեն (աշխարհաբար  
արևմտահայերեն)
21. Graece — հունարեն (նոր)
22. Arabice — արաբերեն
23. Persice — պարսկերեն
24. Turcice — թուրքերեն
25. Curdice — քրդերեն (արաբատառ)

Լեզուներից երկուսը նոյն լեզվի հին և նոր տարրերակներն են՝ հայերեն և հունարեն, որոնք հանդես գալով որպես բնագործ՝ պատճառաբանելի են: Մնացած լեզուները, բացի չորսից՝ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և քրդերեն, բոլորն էլ եվրոպական լեզուներ են:

Հորեւար գրքոյնը, որը սկսել է տպվել 1837-ի հոկտ. 18-ին և լույս է տեսել 1838-ին, հիմք դրեց միաբանության նաև օստա-

րակեզու տպագրական և գիտական գործունեության մի փառավոր շրջանի, որի կարևորագույն արգամիքներից մեկը հետագայում հանդիսացավ «Հանդես ամսօրյա»-ն: Վերջերս լրացավ այս հանդեսի 100-ամյակը:

Այս հոդվածը երախտագիտությամբ ենք ձնում ոչ միայն այն բազմավաստակ Միխարյան հայրերին, որոնք տքնածան աշխատանքով հայկական մտքի շահը պայծառացրին Վիեննայում, այն տպագրական արվեստի այն հայ և օստար աշխատավորություն հիշատակին, որոնք իրենց քրտնաթոր աշխատանքով նպաստեցին ամենց պահելու գիտական այդ օջախը: Այդ աշխատավորություն անոններից միայն մի քանիսը նշելու հնարավորություն ունենք: Դրանք են՝ Սատոն Օսկենֆուս, Ավետիք Հոփեր, հայ և որդի Բրենդլերներ<sup>19</sup>:

Հիմք ունենալով Մեսրոպյան կամ երկաթագիր գրերը, որոնք առկա են ձեռագրերում, տպագրական տառերի գծագրման և վերատեղաման հարցում հայր Արքսեն Սյուրնյանի արած գործը անհամեմատ ավելին է, քան իր փորագրիչ գործընկերների արածը, ուստի և անգնահատելի է նրա գործունեությունը:

Մնացածների անունները, դժբախտաբար, թվարկելու հնարավորություն չունենալով՝ ստիպված բավարարվում ենք մեր միտքը վերջացնելով մի հնարույր դարձվածքով.

Վաստակելոց հիշատակն անթառամ լինի:

#### ՍՐԱԴ-ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

<sup>19</sup> Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 66:

